ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Էյչ Գրուպ ՍՊԸ-ն ՀՀԿԳՄՍՆԵԱՃԱՊՁԲ-26/177 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի		
	ֆիրմային անվանումը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
1	ձյուդոյի տատամի	ձյուդոյի տատամի	Ձյուդոյի տատամի լրակազմ (1 լրակազմը բաղկացած է 98 կտորից)՝ առանձին ուղղանկյուն կամ քառակուսի մոդուլներից: Միջազգային պաշտոնական մրցաշարերին օգտագործվող հիմնական գույներն են կարմիր և դեղին: Ստանդարտ չափսերն են՝ 2x1 մետր կամ 1x1 մետր չափսի մոդուլներ: Հաստությունը՝ պաշտոնական մրցումների ստանդարտը 50մմ (5սմ) է, ինչն անհրաժեշտ է հարվածի ուժը մեղմելու համար: Խտությունը՝ 200-240կգ/մ³, նյութերը և կառուցվածքը ներքին հիմք (միջուկը)՝ պատրաստվում է բարձր խտության սեղմված բազմաշերտ պոլիուրեթանային փրփուրից կամ երկրորդային հումքի փրփրապլաստից (Rebond foam): Արտաքին շերտ (Ծածկույթը)՝ պատրաստվում է ամուր և հիգիենիկ PVC վինիլային նյութից: Մակերեսն ունի «բրնձի ծղոտի» (Rice-straw) հատուկ ռելեֆային կառուցվածք, որը կանխում է սահելը և ապահովում է լավ կպչողականություն մարզիկի ոտնաթաթերի հետ: Հակասահող հիմքը՝ յուրաքանչյուր մոդուլի ներքևի մասում առկա է հատուկ ռետինապատ կամ լատեքսային հակասահող շերտ (Anti-slip/Anti-skid),

			որպեսզի գորգերը գոտեմարտի ժամանակ իրարից չհեռանա: Ձյուդոյի տատամին պետք է հաստատված լինի Ձյուդոյի Միջազգային Ֆեդերացիայի (IJF) կողմից: Լրակազմում ներառված ապրանքները պետք է լինեն նոր և չօգտագործված: Ապրանքների տեղափոխումը, բեռնաթափումը, տեղադրումը, փորձարկումը և մեկ տարի ժամկետով սպասարկումը իրականացվում է Վաճառողի կողմից՝ Գնորդի կողմից նշված հասցեում: Ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում 365 օրը՝ հաշված գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից, երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ եկած թերությունները Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում պետք է շտկել տեղում /դետալների փոխարինում/ կամ փոխարինել նորով: Պայմանագրի կատարման փուլում նշված ապրանքի համար պարտադիր է ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակի կամ համապատասխանության սերտիֆիկատի առկայությունը, ինչպես նաև ապրանքի արտադրողից կամ նրա լիազորված պաշտոնական ներկայացուցչից տրամադրված երաշխիքային նամակ (MAF կամ DAF), որը հստակ հաստատում է մասնակցի իրավասությունը տվյալ արտադրանքը մատակարարելու Հայաստանի Հանրապետություն և տեխնիկական աջակցություն ապահովելու վերաբերյալ: Լրակազմում ներառված մարզագույքը պետք է ունենա համապատասխանության սերտեֆիկատ Ձյուդոյի միջազգային ֆեդերացիայի (IJF) կողմից: Վաճառողը պարտավոր է տրամադրել արտադրողի կողմից տրված նամակ երաշխիքային և հետերաշխիքային սպասարկումը Հայաստանի Հանրապետության տարածքում արտադրողի կամ պաշտոնական ներկայացուցչի (դիստրիբյուտոր) կողմից իրականացնելու համար:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

Эйдж Групп ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-26/177 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар		
	фирменное наименование	наименование производителя	технические характеристики
1			